ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ (ԳՈՐԾԱԾՄԱՆ) ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. «Աշխատողի անձնական Էլեկտրոնային գործ» բաժնի 3-րդ կետը պարզ չէ՝ վերաբերում է նույն դպրոցին, թե «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգին» ընդհանրապես: Առաջարկում ենք, որ արգելքը վերաբերի համակարգին և համակարգը տեխնիկապես հնարավորություն չտա նույն անձի համար մի քանի հաստատություններում վարել անձնական գործ: Անձնական գործը պետք է վարվի այն հաստատությունում, որտեղ տվյալ աշխատողը հանդիսանում է հիմնական աշխատող, իսկ այն հաստատությունները, որտեղ նա կաշխատի համատեղության կարգով՝ ունենան հնարավորություն օգտվելու նրա անձնական գործից:
   Առաջարկ. 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Արգելվում է **համակարգում** նույն աշխատակցի համար վարել մեկից ավելի անձնական գործ»:
2. «Աշխատողի անձնական Էլեկտրոնային գործ» բաժնի 4-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, թե համապատասխան պաշտոնում նշանակվելու մասին իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո քանի աշխատանքային օրվա ընթացքում պետք է լրացված լինի անձնական գործը:
   Առաջարկ. 4-րդ կետի առաջին նախադասությունից հետո ավելացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Աշխատողի տվյալները համակարգ մուտքագրվում են հրամանագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում»:
3. «Աշխատողի անձնական Էլեկտրոնային գործ» բաժնում ավելացնել նոր կետ, որտեղ ինչպես «Սովորողի անձնական Էլեկտրոնային գործ» բաժնում կնշվի, որ մուտքագրված տվյալների իսկության և ամբողջականության համար պատասխանատու է ուսումնական հաստատության տնօրենը:
   Առաջարկ. «Աշխատողի անձնական Էլեկտրոնային գործ» բաժնում ավելացնել նոր կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «Աշխատողի մուտքագրված տվյալների իսկության և ամբողջականության համար պատասխանատու է ուսումնական հաստատության տնօրենը»:
4. Առաջարկում ենք «Աշխատողի անձնական Էլեկտրոնային գործ» բաժնի 4-րդ կետի անձնական գործում ներառվող տվյալներում ավելացնել երկու նոր տվյալ՝
   - Ուսուցչի էլեկտրոնային փոստի հասցեն
   - Դասավանդվող մյուս առարկաները:

5. «Սովորողի անձնական էլեկտրոնային գործ» բաժնի 2-րդ կետում հստակեցնել, որ արգելքը վերաբերում է «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգին» ընդհանրապես, ոչ թե հաստատությանը:
   Առաջարկ. «Սովորողի անձնական էլեկտրոնային գործ» բաժնի 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Արգելվում է նույն սովորողի համար **համակարգում** վարել մեկից ավելի անձնական գործ»:
6. «Սովորողի անձնական էլեկտրոնային գործ» բաժնի 6-րդ կետում «Սովորողի դասարանը» բառերից հետո ավելացնել **«և ենթադասարանը»** բառերը:
7. «Տարիֆիկացիոն մատյան, ոչ պետական ուսումնական հաստատությունների դեպքում՝ հիմնադրի որոշմամբ» բաժնի 2–րդ կետի ցուցադրվող տվյալներում ավելացնել նոր տվյալ, որը ցույց կտա, թե որ հաստիքում քանի մարդ է աշխատում:
   Առաջարկ. «Տարիֆիկացիոն մատյան, ոչ պետական ուսումնական հաստատությունների դեպքում՝ հիմնադրի որոշմամբ» բաժնի 2–րդ կետում ավելացնել նոր տվյալ՝ հետևյալ բովանդակությամբ. «Տվյալ հաստիքում մեկից ավել մարդ աշխատելու դեպքում հստակ նշել առարկան և աշխատողների թիվը (օրինակ, հաստիքը՝ ֆիզիկայի ուսուցիչ, աշխատողների թիվը՝ 3)»:
8. «Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով» բաժնի 2-րդ կետում ավելացնել նոր տեղեկատվություն՝ ենթադասարանի մասին, քանի որ տարբեր ենթադասարաններում ուսումնական առարկաների թեմատիկ պլանները կարող են տարբեր լինել:
   Առաջարկ. «Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով» բաժնի 2-րդ կետում «Դասարանը» բառից հետո ավելացնել **«և ենթադասարանը»** բառերը: